

## ՀԱՂԲԵՑ ԵՒ ՄԵՆՔՆԵՐՆ

Վ. Ա. Ն Ք Ե Բ Բ .

(967—1300).

ԳԼՈՒԽ Ա.

Հիմնարկութիւն եւ հաստատութիւն առաջ-  
նորդութեան.

Հաղբատ և Սանահին վանքերի հիմնար-  
կութեան մասին տարրեր տեղեկութիւններ  
են տալիս մեզ թէ ժամանակակից և թէ յե-  
տագայ պատմիչները՝ յաճախ միմնանց անհա-  
մարտաստիան. նոյն իսկ շատ մուտքն են ար-  
ձանագրութիւնների վկայութիւնները, և եր-  
բին պարզելու փոխարէն՝ աւելի են բարդում  
ինդիրը: Յամենայն դէպս հիմք ընդունելով  
Կիրակոս Գանձակեցու և Վարդանի այն ահ-  
գեկութիւնը, թէ Ռոմանոս Ա. Կայսեր (911  
945) հալածանքից փախած կրօնաւորներն են  
հիմնել Սանահինի սուրբ Աստուածածինը ու-  
րիշ բազմաթիւ նշանաւոր վանքերի հետ որ-  
պիսիք են՝ Կամրջաձոր, Կապոյտ քար, Դպրե-  
փակի, Հոռոմոս ելն, կարող ենք հաստատա-  
պէս ասել, որ Սանահինը Հաղբատից առաջ է  
հիմնած և անշուշտ մինչեւ 945 թուականը.  
928.ից ել առաջ հիմնուած լինել չէ կարող,  
որպէս կէպէք պատահել է Արաս արքայի  
ժամանակ, որ գա՞ է բարձրացել 928.ին:

Սակայն այդ տեղեկութիւնը, ինչքան էլ  
կարեւոր լինի չի կարելի համարել Սանահինի  
հիմնարկութեան իսկական սկիզբն: Քիւզան-  
դական կայսրի ձեռքից փախած կրօնաւորնե-  
րը իրենց համար միայն ապաստանարան էին  
շինել, առանց Հարկաւագուշակելու՝ թէ  
ժամանակով այդ աեզր ահադին հոչակ պիտի  
ստանայ և մեծ նշանակութիւն ունենայ Հա-  
յոց եկեղեցու պատմութեան որոշ շրջանի  
համար:

Բայց անշուշտ այս կրօնաւորների հիմ-  
նած աղքատիկ մնաստանն էր, որ Հայոց  
որրմած և բարեսէր դշխոյի՝ Աշոտ ողորիս-  
ծի (951—977) կին Խոսրովանոյշ թագուշու-  
թը դրաւեց և պատճառ դարձաւ շինուու-  
և աւելի ևս պայծառացնելու այդ երիտ-  
վանքերը, իւր որդոց՝ Ամբատի և Գուրգէնի

հոգւոյ փրկութեան համար: Այսաւել և ա-  
թուականների շփոթութիւն կայ մասնագիր-  
ների մէջ. Ասողիկ, Վարդան, Մատթէսոս Շուա-  
հյեցի, Մինաս Համթեցի միաձայն վկայում  
ենուր շինուին է Խոսրովանոյշ թագուշին,  
վերջին պատմադիրը մինչև անդամ շինու-  
թեան թուականն է գնում՝ նժ (410+551=  
961): Տարրեր թուական է ասպիս մեզ Հաղ-  
բատի սանիկը՝ Ամառել Անեցին, նա առում  
է «ի նժ» (961) թուին Հայոց շինեցաւ Հաղ-  
բատ և Սանահին առան ամառ առաջ քան  
դՀաղբատ ի Խոսրովանոյշ թագուշոյին՝ ի ին-  
չեն Աշոտայ նաշնշահի (100)... ուրիմն Սա-  
նահինի հիմնարկութիւնը զնում է 957.ին:  
Կիրակոս Գանձակեցին աւելի մեծ շփոթու-  
թիւն է մացնում ինդրի մէջ. Կիրե հանու  
առում է նա, Կիւրիկէ արքայ Բագրատունեաց՝  
որդի Դաւթիւ որդոյ Գերենկան, որ Հիմնար-  
կեաց գհուժակառուր ուխտն Հաղբատոց...  
(55). Այսպիսով նա Հաղբատի հիմնարկու-  
թիւնը զնում է ծԱ. գարում, որ ի հարկէ  
ակներե սխալ է, քանի որ այդ ժամանակ  
Հաղբատը արդէն ծաղկած դրութեան մէջ  
էր: Կիրակոսի վկայութիւնը անշուշտ վերա-  
րիւում է Հաղբատում յետագայ ժամանակ-  
ները շինուած բազմաթիւ մատուռներից մէ-  
կնու որով Կիրակոսի մէջ տեղ բերած շփո-  
թութիւնը ինքն իրեն վերանում է:

Մի ուրիշ շփոթութիւն է մացնում  
Հաղբատի կամուզիկէ եկեղեցու Հիւսիսային  
պատի լուսամուռից վերև եղած հետեւալ  
արձանագրութիւնը. «Ի թուին Հայոց նժ  
(991) և Սիմեոն Հայը և Տիրանուն երեց շի-  
նեցար զեկեղեցիս վրկութեան Ամբատի և  
Գուրգէնայ ...»: Հայը Սիմեոնը Հաղբատի վա-  
նահայրն է, իսկ Տիրանուն երեցը՝ միաբան,  
պէտք է ենթաղբել որ Խոսրովանոյշ թագու-  
շու կենդանութեան ժամանակ բոլորովին վեր-  
ջացած չէր շինքը և միայն 991.ին վերցիշեալ  
անձանց հսկողութեամբ աւարտուել է:

Այս մի քանի խառն տեղեկութիւնները  
պարզելուց յետոյ աշխատենք Համաձայնե-  
ցնել շինութեան թուականները, որ ինչպէս  
աեռանք, աարեսէր կերպով են աւանդում մա-  
տենագիրները: Ունինք ուրեմն իրեն հիմնար-  
կութեան թուական 961-ը, 957-ը (Սանահ-

նի համար) և 9 չ-ը (Հաղբատի համար). ուրիշ թուական որոնելը միանգամյն առելորդ և զուր աշխատանք կլինի: Մատենադարձները և մնացած արձանադրութիւնները ոչ մէկի օգտին էլ չեն վկայում. մնում են ձեռագիրների յիշատակարանները, և յիրաւի դոցանից մէկը—ժամանակակից անձնաւորութեան ձեռքով գրուած, վկայում է վանքերին շինութեան մասին, որին և լիովին հաւատ պիտի ընծայենք, իրբեւ ժամանակակից և դէպքին ականատես անձնաւորութեան: Սարդիս վրդ. Զարալեանց իւր «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան. Մասն Ա» հեղինակութեան մշջ Անահինի արձանադրութիւններից յետոյ զնում է հետեւեալ ծանօթութիւնը. «Ի կանոնադիրս սրբոյն Բարսղի գրեալ է այս յիշատակարան, զոր տեսի ես ի քեօթիւկ անուանեալ մատևնին՝ վասն շինութեան վանուց Անահինի», այս ծանօթութեանը հետեւմ է յիշատակարանը, որ է. «Յս անարձանս ի կրօնաւորաց փյուն զրիչս Սիմեոն ի թուականութեան Հայոց Նիւթի (972) ի նորաշէն փանքս կրծեալ Անահին, հրամանաւ հօր իմց Յովհաննիսի, որ էր վանիս շինութեան ամք վեց (972—6=966—967), զոր շինեաց բարեպաշտ թագուհին Խորրիշնոյշ ամուսին Աշոտոյ Հայոց Նահնշահի, որդի Ամրատայ Բագրատունուց Հայոց թագաւորի, և յառաջին տիր հայրապետութեան հօգենոր հօրն հանուրց Տեառն Խաչիայ արժանաւոր վերատեսչի (այս Խաչիկ կաթուզիկոսը Խաչիկ Ա. Արշակունին է, որ 972—992-է բազմել ա. Առևաւորչի աթոռի վերայ) և յեպիսկոպոս թեան մերումն գաւառի Տաշիր Գրիգորի, արժանաւոր հօտապետի, որ և նորա առաջնորդութեանն ամք երկու ի թագաւորութեան Աշոտոյ և Նորին որդւոյ Ամրատայ, քաջք և յաղթողք թագաւորաց Հայոց: Արդ՝ որք ընթեանոյք և լուսաւորիք ի բանից գրոցու, յիշեսչիք ի մաքրամատոյց աղօժու ձեր զԱշոտ Նահնշահ և զինուղ սուրբ ուխտին՝ զրաբեպաշտ և զաստուածաւէր թագուհին և զիւրիանց որդեակին, զարի և քաջն շինաւոյն Հայոց թագաւորն Ամրատ և զեղբայրն նորին զԴադիկ և զԴուրդէն. ևս առաւել յիշելոյ արժանի համարեսչիք զհանգուցեալ սուրբ

հայրն մեր առ Քըիստոս Պօղիկարսկոս, որ սիկդրէն արար վանիցս շինութեան և փոխեցախ զասա անմարմնոց որոյ հանգստեան են ամք երկու (+970), ևս առաւել յիշեսչիք զնորին փոխանորդ զուխտի առ աջնորդս զհայրն Գրիգոր մաքուր յոյժ և ամենայն առաքինի գործովք լցեալ .....

Այս յիշատակարանը մեզ համար առանձին կարեւորութիւն ունի 2 տեսակեալից. Ա) սրանով վերջնականապէս լուծուում է Հարբատ և Սանահին վանքերի հիմնարկութեան թուականի խնդիրը. մենք իմանում ենք, որ այդ վանքերը հիմնուած են Խոսրովանոյց թագուհու ձեռամբ 967-ին, ի հարկի չհաշուելով Յունաստանից փախած կրօնաւորների 930-ական թուականներին շինածը. միւս թուականները միայն պատահական սիամլունք կարելի է համարել: Խակ այն հանգամանքը, որ Սամուել 10 տարի առաջ է ընդունում Սանահինի շինութիւնը Հայրատից, թերեւ հիմնուած է այն տեղեկութեան վերայ, թէ Սանահինի մենաստանը հիմնել են Ռումինս Ա. Ակապենից հալածուած կրօնաւորները Արաս արքայի ժամանակ (928—951): Բ) Այս յիշատակարանը աւանդում է 2 նախկին վանահայրների անունները, որ չունենինք: Ասողիկի տուած տեղեկութեան համաձայն (181) Սանահինի առաջին առաջնորդն է եղել «Յովհաննէս զիտնական այրն Աստուծոյ». Խոկ այս տեղեկութեան համաձայն առաջնորդը եղել է Պօղիկարսոս ոմն (967—970), ասդա Գրիգոր անունով մէկը. երեխ սոցանից յետոյ է Ասողիկի Յովհաննէսուը և ասդ 979-ին Ամրատ արքայի հրամանաւ եպիսկոպոս դարձած Խասյին: Խակ Հաղբատի առաջին առաջնորդը, ինչպէս վկայում է նոյն Ասողիկը, եղել է Արմեոն ճղնազգեաց ծառայն Քըիստասիւ, ասդա ոմն Տիրանուն Նել (996), որին միանգամ արդէն պատահեցինք արձանադրութիւններից մէկի մէջ:

Հասել է մեզ նաև Ամրատ Բ. Բաղրատունի արքայի (977—990) հրովարտակը, զրուած Սանահինի ուխտին, վանքից շինութիւնից 12 տարի յետոյ Նիլ (979) թուին:

Այդ հրովարտակը, ինչպէս վկայում է Զարլեննը՝ գտնուում էր ի տան աղջակէր իշխանացն Հայոց երկուց հարազատաց Մովսիսի և Յովհաննու և հօրեցրորդուոյ նոցա մասի երկայնարագուկ Արդութեանց ի Տիփիսու, որից նիքը ամենայն զլու շուբմեամբ և իննամբով արտադրել է։ Այդ հրովարտակում ի միջի այլոց ասած է. «Ես Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց՝ թոռն ամեզերակալ և մեծ թագաւորին Սմբատայ, որդի թագաւորին Աշոտ Աղորմածն կոչեցելոյ, եկի ի տեսութիւն ուուրբ ուխտիս Սանահնի, զօր շինեալ էր թագաւորն Աշոտ և Խոսրովանոյշ թագուհի՝ Հայրն և մայրն իմ, և աեսի զի Աստուածաշն և թագաւորաշն էր, վասն որոյ սիրեցի և սիրոյ նշան արարեալ հաստաեցի զսա աթոռ, և սիսկոսութեան և սահմանեցի զիթակ սուրբ Աստուածածնիս, և զուրբ Հայր վանաց զեսայի ետու առնել եպիսկոպոս մեծի Հայրապետին Հայոց Խաչկայ .... ևն։ Գրեցաւ ի թուականին Հայոց նիմ։ (979)-ին։

Այսպէս ահմանում ենք, որ Սանահնի սուրբ Աստուածածննը այդքան կարծ միջացում—12 տարուայ ընթացքում, կարողանում է Բագրատունի արքաների սէրը գրաւել և նրանցից զանազան արտօնութեանները և հրովարտակներ ստանալ, որ ի հարիէ ինստ բարեյաջող մի հանգամանք էր նորա արագ յառաջդիմութեան համար։ Իսկ այն հանգամանքը, որ նա շուտով եպիսկոպոսական աթոռ դարձաւ, մեծապէս նպաստեց նորա հռչակին և շեղինակութեան ատարածուելուն, և առաջնակարգ զիբը է տալիս նրան։

Այս բարեյաջող հանգամանքնը պէտք է համարել պատճառ, որ Հենց սկզբից Սանահնին ու Հաղբատը զրաւում են իրենց մէջ մօտ 500 կրօնաւոր, ինչպէս վկայում է Ասողիկ։

Ասկայն ինչ որ ասացինք Սանահնի զարդացման համար, գմբաղջարար նոյնը չենք կարող ասել նաև Հաղբատի համար. բաւական երկար՝ մօտ զար ու կէս շրջանից շատ քիչ ու կցկուուր տեղեկութիւններ ունենք նորա մասին։ Այդ ժամանակուայ ընթացքում նա պատրաստուում էր արքանապէս հանդէս ենելու և իշխելու բոլոր արեւելքի վերայ։

Այդ իսկ պատճառով ժամանակաւորապէս սախուած ենք մի կողմէ թաղնել Հաղբատը և զրադուել Սանահնով և նորա զպրոցով ու Տեղինակութեամբ, մինչեւ կդայ նաև Հաղբատի փառաւոր ժամանակը, երբ նա ոչ միայն հասաւ իւր քոյր Սանահնին, այլ և վասահութեամբ կարելի է ասել՝ անցաւ նրանից և բոլորի համար առաջնորդ և ուղեցոյց զարձաւ շատ երկար ժամանակ։

ԳԼՈՒԽ Բ.

## ՍԵՆԵՑՆԻ ԴՊՐՈՑ

Նախկին զլիում՝ յիշած բարեյաջող հանգամանքների շնորհիւ հետպհետէ պայծառացաւ և ծօխացաւ Սանահնի վաճկը թէ մուռապէս և թէ նիւթապէս։ Շնորհիւ մի քանի նշանաւոր եպիսկոպոսների՝ ուսումն ու կրծութիւնը այնքան յառաջ գնաց այս վանքի մէջ, որ շատ մարդիկ նրա համբաւը լսելով, մեծ փափաղով գալիս եին ուսումն ու զիտութիւն ստանալու այդ հոչակաւոր ուսումնափայրից։ Հայոց աշխարհի ամեն կողմերում տարածուած էր նրա անունն ու հռչակը իրեւ ամենամեծ գլորոցի, որի համար համալսարան անունը ժառանգեց։

Ցիրաւի, այս շրջանում՝ ԺԱ. դարում, Սանահնը ամեն կողմից ապահովուած մինելով և հզօր պաշտպանութիւն վայելելով, նորա միաբանները այլ ևս ոչ մի հոգոս չունեին և ամենայն զիւրութեամբ կարող եին զիտութիւն մշակել և տարածել շրջակայքում և հեռաւոր տեղեր, որ և նորա ամենայն յաջործութեամբ և փառքով կատարում են։ Եւ աչա յառաջ է զալիս Սանահնի զպրոցը, որ այնքան գիտուն և բանիմաց վարդապետներ է տուել Հայ աղքին, այնքան հայ եկեղեցուանկախութեան նախանձախնդիր և պաշտպան պաշտօնեաններ մատակարարել և մեծապէս նպաստել Հայոց համար կորուսիչ միւռթեան գործը խանգարելու, որին այնպէս եռանդով հետեւում էին զանազան քաղաքական պատճառներից զրդուած արեւմեան հայ եպիսկոպոսներ, իշխաններ, և նոյն իսկ կաթուղիկուներից ոմանք։

Սանահնի դպրոցի հիմնադիր կարելի է համարել յայտնի Գևոսկորոս Սանահնեցուն, որ 14 տափա կաթուզիկոսութիւն արեց Պետրոս Գևոսկարձի բանտարկութեան ժամանակ. (1036—1038): Խոկ երբ Աղօւանից Յովհաննես կաթուզիկոսը հաշտեցրեց Յովհաննես արքային և Տէր Պետրոսին վերջնիս բանափառ առաջի այն ժամանակ Անուոյ ամրության կողմէնած յարձակուեցաւ Գևոսկորոս կաթուզիկոսի վերայ, որ այդ ժամանակ Տիրոջ մելքրատութեան հանդեսն էր կատարում, և կաթուզիկոսական քողը պատառ պատառ արեց նորա անմեղ գլխին, ցանկանալով կաթուզիկոս տեսնել Նորից սիրելի Գետադարձ Հայրապետին: Այսուհետեւ Գևոսկորոս խիստ վշտացած վերադարձաւ Սանահնի և շուտով սրանեզրութիւնից վախճանուեցաւ և թաղուեցաւ այն տեղ եկեղեցու մօս: Մատթէոս Աւոհայեցին սորոն կոչում է մեծ հուետօր և զիանական:

Գևոսկորոս Սանահնեցու աշակերտներից է և նշանաւոր Յակաբի վարդապետ Քարափնեցին կամ Սանահնեցին: Խոր զիտութեամբ և տեղեկութեաներով հպարտացած սա իրեն ժամանակի Հայոց նշանաւոր աստուածարաններից մէկը Աստպուրականի Անեքերելից արքայի որդուոց՝ Ատոմի և Ասուանիցի ցանկութեամբ Բիւզանդիոն տարուեցաւ, ուր վիճարանութիւն ունեցաւ յոյն աստուածարանների հետ և մի քանի կետերում համոնայնելով նորանց հետ 1060-ին միարանութեան զիր տուաւ: Խոկ այդ զիրը Գագիկ արքան պատուեց Կոստանդինու Տուկաս կայսեր առաջ, յայտնելով, որ մի վարդապետի գրածը չի կարող ամրոջ հայ եկեղեցու կողմից զըրուած համարուել: Յակովը ՇԼ.Դ (534+551=1085) թուին մեռաւ Աւոհայում և այնտեղ էլ թաղուեցաւ ինչպէս վկայում է Մատթէոս Աւոհայեցին: «Յակովը Քարափնեցի, որ յորջործեալ կոչեր Սանահնեցի, այր հզօր, կորովի: սորա հասեալ ի վերայ հին և նոր Կոստանդին Աստուծոյ, ուսեալ և հասեալ սորա ի վերայ հռետորական իմաստութեանց և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին զիտութեանցն. սա էր յաշակերտաց Մեծին Գևոսկորոսի հօրն Սանահնի .... և յայսմ ժամանակի էր ի քաղաքին:

Աւոհնա և Տերութեամբ քաղաքաբեալ զիւանս իւր և զաւով նենզութեամբ լուծեալ եղել ի կենաց. վասն զի զաւանելին զնա մեսեալ ի մահին իւր սուանց հեծութեան և ցաւոց... և մեծաւ հանգիստի թաղեցին զնա ի դուռն սրբոյ եկեղեցւոյ իւր բայ, ի հիւսիսային կողմն քաղաքին իրեն նեալնիւց մի հետի ի պարըստն: Սորա անունով է հնացել «Յանակիցինական» ծոցոյ Հօր: Հանդասեան շարտկանը:

Բայց Սանահնի վասքն ու պարծանկը նորա ամրոջ գիտական ուսման և ողուներ կայացուցիչը, այն բազմիմաստ և պիրճարան վարդապետն է՝ Անանիա Սանահնեցին, որի գրուածքները այժմ էլ կարդալիս ընթերցան զգում է, թէ ի՞նչպիսի ուժի և զրչի տէր է եղել նաև Սորա երկերից և ոչ մէկը մինչև այսօր հրատարակուած չէ, չնայելով նրանց կարեւորութեան, բազմազանութեան և ընտիր լինելուն: Կիրակոս Գանձակիցին սորա մասին ասում է. «Այս մտաւոր և հանձարեկը, զիւանդարական արուեստի և աստուածային զրոց մեկնող, սորա ասեն հաւաքեալ ի մեկնութիւն առաքելոյ զրաննն Եփրեմի և Յովհաննու Ասկերերանին և Կիւրդի և այլ սըրբոց արարեալ համառատ վասն զիւրահասութեան ընթերցողաց, արար և խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմատութիւն աւետարանացն առ օրինակս, գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սըրբասացութեանս, որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասեն, և զներբոզեան շողակալթին:

Անանիա Սանահնեցու անուամբ ձեռապ զիրների մէջ պատահում են հետեւեալ աշխատութիւնները.

Ա) Կիրակոսի յիշած Պօղոսի ըորեքտասան թղթոց մեկնութիւնը.

Բ) Բան հակածառութեան ընդդէմ երկարնակաց.

Գ) Խրատ ոգեշահ, թէ որպէս կարասցէ մարդ զիմաստ որոշել յերկրաւորացս.

Դ) Խրատ քահանայից.

Ե) Ե խորհուրդ Յովհաննու մարդարէի.

Զ) Անանիայի գրուատ ի սուբր Մկրտիչն Յովհաննէս.

Է) Սակա անխոտիր հաղորդելոյն Յունաց.

Ծ) Վասն խոնարհութեան.

թ) Վասն համբերութեան և խաղաղութեան:

Ժ) Վասն զղջման և արտառուաց:

ԺԱ) Վասն անցաւոր աշխարհիս:

ԺԲ) Վասն ապաշխարութեան:

ԺԳ) Յաղագս խորհուցոց:

ԺԴ) Խրամք, (և այլ շատ քարոզներ):

ԺԵ) Մեկնութիւն Մատմէսի աւետարանին:

Վերջին աշխատութիւնը նա կատարել է իր ուսուցիչ և Անահայի առաջնորդ Դէռակորսի համանաւ, ինչպէս երեսում է Մայր Աթոռի № 178, 179 (Դէռգեան) ձեռագիրների յառաջարանից որ քաղուածօրէն մէջ ենք բերում: «Ընկալեալ զհրաման Տեառն իմայ չօր Դէռակորսի և հոգելիի վարդապետի Անահային սուրբ ուխտի առաջնորդին զոր յոյժ ըլքիւ և սիրական բաղձանօք հայցեալ պահանջեիր ի մէնջ, վասն բացայայտութեան ակրանեան բանից կենապեր աւետարանին՝ համուօտարար շաբագրել զրբոց վարդապետացին վիբաճառութիւն, որք աւեսութեամբ հոգոյն բացափայլեցին ի մեզ զլոյս դիտութեան և ղծածկեալ խորհուրդ հոգւոյն, որ ի բազմաց զանխլարար թաքշիւր ..... Արդ՝ իմ ապաստան եղեալ ի զօրութիւն Աստուծոյ, որ ոչ միայն աւետարանչաց, այլ և արտաքնոցն բացայայտէ ղծածկեալ խորհուրդ կամաց իւրաց յապագայան վասն օգտի բազմաց, հաւառութէ, և ձերավ ազօթիւք տացէ և ինձ կարողութիւն սկսանել և կատարել զհայցուածն ձեր առ ի յօդուա բազմաց .....»:

Այս յիշատակարանից արդէն երեսում է, մէ ինչքան աշխատում էին Անահայնեցիք, մասաւնդ նոցա առաջնորդները, զիսութիւնն ծալիցնելու և հարստացնելու համար, ի՞նչ պէս ստիպում էին, թափանձում և խընդում այս ու այն կարող անձին, որ մի կարեռ նիւթ մշակէ, նրա մասին մի բան զբէ, և այն ոչ թէ միանդամ, այլ մերժումն ստանալուց յետոյ խկ շատ ու շատ անգամ խըրումն մինչեւ վերջադէս հանում էին իրենց փափաղին:

Անանիս Անահայնեցու միւս ծանր աշխատութիւնը Պօղոսի չորեքտառան թղթերի մեկնութիւնն է, որ խկապէս ծայրից ծայր

քաղուածք է Ասկերերանի, Եփրեմի և Կիւրդի նման զրուածքներից: Սակայն չնայելով որ ինքնուրայնութիւնը քիչ է այս զրուածքների մէջ, այնուամենայնիւ Անանիս Անահայնեցու մատուցած ծառայութիւնը նոյն խկ այդ կետում խիստ մեծ է, որովհետեւ աւետարանների կամ Պօղոսի թղթերի մի ամբողջական մեկնութիւնն տալով ժամանակակիցներին հիւսուած այնպիսի նշանաւոր մեկնաբաններից որպիսիք են Ասկերերան, Կիւրեղ և Եփրեմ, նա միջոց է տալիս բաւ հասկանալու, զիտակցութեամբ ըմբռնելու սուրբ Գիրքը:

Մեր խնդրից գուրս է ի հարգիւ, և անշուշտ շատ հեռու կաներ, Անանիս Անահայնեցու բոլոր մասն մունը աշխատութիւնների վերլուծութիւնը, բայց և այնպէս թող աւելորդ շամարուի նրա գլուխ գործոց «Հակածառութիւն ընդդեմ երկարնակաց» զրուածքի մասին մի քանի տեղեկութիւն հաղորդել՝ ծանօթացնել ընթերցողներին Անանիս Անահայնեցու ոգու, կրթութեան, աստուածարար հայեացքների հետ: Այդ բանը կարեւոր է նաև այն պատճառով, որ Անանիայի ողին Անահայի զպրոցի ողին է, Անանիայի ու բժին Անանիայի ողին ըմբռնելով և նորա ուսման ու հայեացքներին ծանօթանալով մենք մասամբ ըմբռնած կլինենք Անահայի զպրոցի ողին ու ուսումը:

Հակածակորդների գէմ Անանիայի բերած փաստերը, որ անշուշտ մեծ մասամբ նա կը կին ուրիշ հայրերից է քաղել՝ հետեւալներն են:

Ամէնից տաաջ երկարնակների դաւանութեամբ երրորդութիւնը չորրորդութիւնն է գտնենում: նա ասում է, «Զնոյն և զմի բնութիւն ասեմք ի կուսէն ծնեալ, որ ի հօրէ անսկըզբնարար ծնեալ, և ոչ այլ ոմն ՚ի կուսէն և ոմն զ ՚ի հօրէն ծնեալն»: Հակածակորդների այն կարծիքի զէմ թէ Աստուած չէ խաչուողը, նա ասում է: Ամէն ոչ Աստուածոյ են չարչարանքն և արիւնն, զիարդ հաղորդիմք ի նա կամ որպէս փրկէ զմեզ արիւն մարդոյ: ապա ուրիմն և ոչ զմահն Աստուածոյ խոստվանիմք, և զիարդ լուծաւ մահ: զի մարդոյ մահ զ զմագաւորեալն յԱդամաց մահ ոչ կարէ լուծանել, զի և ինքն դրաւեալ է ընդ իշխա-

նութեամբ մահուց որպէս և նախահայրն մերու Այսպիսի փաստաբանութեամբ նա քանդուած է, համարում երկարնակների ամբողջ զաւանութեամբ և ցոյց է տալիս, որ նորա իրենք իրենց են հակառում: Մարմինը երկնքից իջած լինել չէ կարող և կեանք պարզեւել. հարկաւոր է անպատճառ խաշեալ ընդունել Աստուծունի որպէս այդ է մեր գրկութեան խարիսխը: «Մասնեցաւ վասն յանցանաց մերոց և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ»: Դիմում է հակառակորդներին, «Արդ՝ ասացցնու, յօ հաւատամք, որ զմեզ արդարացուցանէ, ի մարդուն, որ մասնեցան և մեռան վասն զմեզ արդարացուցանելոյ: Թէ ի մարդու հաւատամք, մարդ ոչ արդարացուցանէ, և եթէ յԱստուծուծ՝ ոչինչ կրեաց ըստ նոցա վասն զմեզ արդարացուցանելոյ: Դարձեալ առէ, առ աքեալ, թէ մեռաք ընդ նման հաւատամք, թէ յառնեմք ընդ նման եթէ ընդ մարդոյ մեռաք ոչ հաւատամք, քանզի և ոչ իսկ յառնեմք, իսկ եթէ ընդ Աստուծոյ, Աստուծած որ ի մարմին ոչ եղեւ զիարդ մեռանի, ահաւանիկ բարձաւյոյս յարութեան մերոյ»: Խնդին ընդունում է, որ Աստուծոյ է մահն այն, որ ի մեռեալ հալեալ կենագործէր ի գժոխս և որ մեռեալ են մեղքը ի մահ նորա պատուաստեալ, արմատ անմահութեան բողոքնեալ պաղարերեցին, և զայս մահն Քրիստոսի ներզործեաց ի միջ: Պէտք է խստովանել «Նոյն բանն որ ի ծոց հօր եր, նոյն ի ծոց կուսին, նոյն ի խաչին, նոյն ի գերեզմանին նոյն ի գժոխս, նոյն յարուցեալ և ի վեր համբարձեալ և գալոց է նոյնին միացեալ մարմնովն և զատելոց է զերկարնակն. զի մի է բնութիւն բանին և մարմն նոյն վասն միաւորութեան: Միևնոյն է աեսանիի մարմինն և անտեսանելի բանն, և ոչ բաժանին յերկուս որպէս հուր ընդ երկաթ միացեալ կամ լոյս ընդ օդու և հուր զինութիւն երկաթոյ ընկղոթ, և լոյս զօդս լուսաւուրէ, և որպէս հուր զինութիւն երկաթոյն փափուէ յիւր լուսաւորութիւն և յօդս լուսաւորէ, սոյնպէս և հուրն աստուծութեան զմարմինն մաքրեալ և պարզեալ և ձգեալ ի ծայր աստուծութեանն, միացոյց յինքեան աստուծացոյց, և մի են նորա, և ոչ երկու, թէպէտ և զու հարես յերկուս բաժանել:

որ միանգամայն սխալ է: Անանիան շարունակում է, «Նոյն քահանայապետ միջնորդ Աստուծոյ և մարդկան մարդոն Յիսուս Քրիստոս, որ նեղ զանձն վասն մեր... իսկ նա քահանայապետ էր իրեւ Աստուծած: «Մարդոյն չէ հնար զայս ի մեղ ներզործել և մերկ բանն ոչ պատրապի ի խաչին, ապա ուրեմն յաց է թէ միացեալ բանն միով բնութեամբ և միով զօրութեամբ ներզործեաց զայս ամենայն ի մեղ»:

Իմ բերած մի քանի օրինակներից արդին պարզ երեսում է Անանիա Սանահնեցու արամարանութեան ուղղութիւնը և վիճականական արուեստն ու հմանութիւնը:

Բայց Անանիա Սանահնեցին միայն արամարանական հերքումներով չէ բաւականական: Նա շատ լաւ համանում է, որ ամեն բան քննելով չի պարզուիլ, կան բաներ, որ բարձր են մարդկային տկար մորից, ուրեմն և քննելով ոչ թէ ծշմարտութիւնը կդանենք, այլ առելի և աւելի կիսարիսափենք խորին խառարի մեջ. Աստուծոյ չարչարանք և խաչ առել ոչ է մասց քննելի, այլ հաւատոյ ընդունելիք .... Եթէ կամիս շահել յայդմ անձանելորդոցդ, մի՛ քններ, զի մի՛ ընկղմեսցիս այլ նիստ ի վերայ լուսափայտին հաւատոյն և նաւեալ ընդ անդունդս խորոց աստուծացին խմասիցն և խնդրեալ զիատուական մարդարիսն Քրիստոս և զայելու զիատ բարձեալ ի վերայ լուսափայտին հաւատոյն և նաւեալ ընդ անդունդս խորոց աստուծացին վկայութիւններ բերելով, հաստատում է, որ մերն է ծշմարիտը:

Խնչպէս որ Հայոց եկեղեցւոյ ուղիղ վարդապետութիւնն է պաշտպանում Անանիա Սանահնեցին, այնպէս էլ սովորութիւնները օրինակ անխոր հացիւ և անապակ զինով պատրապ մատուցանելը, խորհրդաւոր ընթիրիքի աւետարանական նկարագրութիւններ վկայութիւններ բերելով, հաստատում է, որ մերն է ծշմարիտը:

Այս նոյն զբքի մեջ Անանիա Սանահնեցին բացարում է անարժանութեամբ հազորդուելու վիստակարութիւնը, Աւագ Հինգշարթի օրը ճաշակուելու անպատշաճութիւնը, հերքում է Տիրոջ մարմինը առականացու ա-

սովորի կարծիքները և իւր ճշմարիս հայեացքն է մէջ աել բերում խօսում է ներքինացեալների և պատկերապաշտութեան զէմ Քաղիկանի դաւանութեան մերժման համառուսութիւններին է անում Արաց բաժանումն է պատմում խօսում է բաղարջի և մեռնի ծննդեան տօնի բաժմանման և վերջապէս Առու Աստուածածի գործածութեան մասին Մեղ Համար շատ կարեոր և հետաքրքրական է այստեղ այն տեղեկութիւնը, որ նու սուպիս է մեռնորդ հնութեան մատիւս այստեղից, իթէ չեմ սխալւում, առաջին անգամ մեր գրականութեան մէջ վկայութիւն ունինք այն հին սովորութեան մասին, որ նոր մեռն օրհնելիս հինը մէջն են ածում:

Այս բոլորից յետոյ մի բան սակայն չենք կարող անուշադիր թողնել, առ Հասարակ վիճարանական գրուածքների մէջ խիստ աչքի են ընկնում կրքերն ու մարդու հոգեկան յուզումները. զիձողը ամեն կերպ աշխատում է ծաղրել, արհամարհել, անվայել խօսքեր ուղղել իւր հակառակորդի հասցեին, գեռ և սովոր չափացուցած, զրգուուած դրութեան մէջ մի ակուակ յարձակողական զիքը է բանում և աշխատում է ամենատաք կողմերից ներկայացնել հակառակորդի կարծիքներն ու փառաբերութեան նաև անգամ պատահում է, որ այս ձեռքի յարձակուելով մոլորուած մի մարդու վերայ նորան հերետիկոսների դասը ձգերով և զիմին անէծը ու նզովք թափելով, առելի են հաստատում նորան իւր մոլորութեան մէջ, և պրոդրութիւնի փախանակ իրենց վիճարանութեան հակառակին համանու և մոլորուածին դարձի բերելու, բոլորովին կորցնում են նորան, անձնարձակութեան տապով իրենց բովականն զրդումն և եսականութեանը:

Բայց սցանեգ Անանիա Սանահնեցին ներկայանում է, մեր առաջ իրը ուրիշ տեսակի մի վիճարան, նու չի զայրանում, չի տաքանում ամենեն, հակառակորդներին հերետիկոս չի անուանում և նորոգում, միշտ աշխատում է և կորողանում է իրեն զայրած պահել. չի խեղաթիւրում հակառակորդների կարծիքները և միցն վաս կողմերը դնում մեր առաջ, ոչ անշատութեամբ աշխատում է պարզել ուղին ու սխալը՝ բոլորովին հանգիստ և ան-

վրդովի կերպով:

Անանիա Սանահնեցու հակամառութեան եղանակն այս է. նախ՝ մէջակ դնել հակառակորդի կարծիքը այնպէս, ինչպէս որ կայ, ապա աշխատել արամարտնորդին, կամաց կամաց, առանց շտապելու հիմնովին հերքել այն: Խնչպէս ասացինք, նա յաջողութեամբ կարողանում է, իւր այդ նպատակին իրազործել և շատ քիչ անգամ զուրս է զալիս սցանանից, այն էլ խիստ չափաւոր կերպով, այդպիսի գեպքերից է օրինակ գալոց է զատել զերկարնակն. խօսքերը, տակոյն հենց այսպիսի համեստ գրգռումներն էլ շատ քիչ են պատահում և այս կազմում է խիստապէս Անանիա Սանահնեցու ամենազլիսաւոր արժանիքներից մէկը, որ նա հարկաւ ժառանգութիւն է սասցել իւր հեղ ու խաղաղասէր ունուցիչներից և Սանահնի դողոցից:

(Կը շարունակուի)

Եր. ս.

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Մէջնակարգ դպրոցների ծրագրի վերաքննութենը ուուսաց կրօնական մամուլի մէջ յառաջ է բերել կրօնի գասատւութեան խնկերը: Մեծամասնութիւնը զանգատում է, որ թէև կրօնն ըստ գլորոցի ծրագրի գլխաւոր առարկաներից է, բայց իրականութիւնը ցոյց է տալիս որ կրօնի գասաւանդութիւնը միջնակարգ դպրոցներում խիստ անմիջիթարական է. Ըստ Շեր. ԵԵԾԹ. Գորա պատճառը այն է, որ կրօնուաոցը ի նկատի ունենալով գլորոցի ծրագրը, անցնելիք գասընթացը բաժանում է գասերի, տալիս է նոր գասեր և պատուերում է, որ հետեւել անգամի համար լաւ սերտեն: Յաջորգ դասին սովորածը հարցնում և աշակերտի գիտութեան չափը որոշում է թուանշանովի Այսպէս կրօնուաոցը ցիսաւոր նպատակն է դառնում մի կերպ ամրող ծրագիրը անցնել խել աշակերտի միակ նպատակն է լինում տէրտէրի պատմածը սերտել՝ լաւ թուանշան ստանալու համար Կրօնուաոցը ուուշ շուտ թերթում է դասագրքի չանցած